


16436



ՅՈՎՀԵՆԻԿՈ ԶՐԱԲԵՐԳԹ

10

# ԱՆԴՐԾԻ ԶԱՏԻԿԸ

ԳՐԱԴԱՐԱՆ



Օվանես Ջրաբերդցի

## ՊԱՏԽԱ ԲԵԶՐԱԲՈՒՆԱԳՈ



ԲԱԿՍ

Տիպոգրիա A. N. Տարաևա և L. D. Միրզայնց  
1912.

891.99  
Հ - 86

АРМ.  
Н 2-1252а

2-1252а Аи-1306

891.99  
Ω-86

ՅՈՎԵՑՆԵՍ ԶՐԱԲԵՐԴՅԻ

# ԸՆԳՈՐԾԻ ԶԱՏԻԿ



Ованесъ Джрабердци

**ПАСХА БЕЗРАБОТНАГО**



ИНВ. № 22353

БАНУ


Типографія А. Н. Тараєва и Л. Д. Мирзаянца  
1912.

2003

45043-uh



29345-63



## ԱՆԳՈՐԾԻ ԶԱՏԻԿԵ:

Գեղածիծաղ գարնանային արևն ընկել էր  
կանաչազարդ ծառերի վրայ և մեղմ զեփիւոփ  
հետ միասին մի հրաշալիութիւն ստեղծել երկրի  
երեսին. Օրւայ բարեխառն եղանակն էլ կարծես  
ուզում էր կատարելիութիւն տալ զատկի տօ-  
նին: Եկեղեցիների բարձր կաթուղիկէների ու-  
կեզօծ խաչերը պայծառ փայլում էին քաղաքի  
գլխին և զատկի տօնին ժպիտ մատուցանում  
իրանց բարձունքից: Բ. քաղաքի կեանքը ամեն  
տեղ եռում էր. Փողոցները լիքն էին մարդկան-  
ցով, իսկ շուկաներում և խանութներում ասեղ  
ձգելու տեղ չ'կար: Ամենքն էլ զատկւայ հանդի-  
սի համար նոր նոր հագուստներ էին առնում.  
շուկաներից ուտելեղէն, գինեաներից զանազան  
գինիներ ուօղիներ կրում լի զամբուղներով տուն:  
Մանր երեխաների համար խաղալիքներ առնում,  
մերձաւորների ու բարեկամների համար ընձա-  
յացու առարկաներ ջոկջըկում, բաղցրաւէնիք-  
ների խանութներից թաքաղներով քաղցրեղէններ  
կրում... Մի խօսքով կեանքը «Եփում էր իւր  
կաթսայում»:

Երեկոյեան զանգակների դօղանջիւնը բոլորին եկեղեցի էր հրաւիրում, որ զատկւայ տօնին պատշաճ ժամասացութիւնը վերջանալուց յետոյ, ցրւեն իրենց տները ու սկսեն ուտել խմելը:

Ժամը եօթն էր: Խանութները, գրասենեակներն ու բոլոր շուկաները կապւած էին: Կենդանութիւնը փողոցներից փոխադրւել էր տները անուշահոտ ու ճոխ սեղանների շուրջը բազմել, Ամեն բակից գառների բարակ մայիւնը քաղցր ձայնով հեռւից լսւում և զատկումուտի ու գարնանամուտի գալուստը գուշակում:

Մերթ ընդ մերթ փողոցներում քաղաքապահների ոտքերի ձայներն էին լսւում, որոնք զրկւած զատկւայ տօնից ուրիշների կեանքի ապահովութիւնն էին ըստանձնել և արթուն հըսկում էին, որ ոչ ոքի զատիկը չխանգարւի. ամենքն էլ կարողանան լաւ տօնել այդ օրը:

Ուրախութիւնը իւր թևերը տարածել էր ամեն տեղ, բոլորի վրայ: Միմիայն Միքայելն էր տխուր ու տրտում. նստած ծովի ափին, քարերի վրա, մերթ ծովի մեղմ խաղացող ալիքներին էր նայում, նորա վրա հեռու մութ հորիզոնի մէջ ինչ որ որոնում, մերթ էլ երկնքում լողացող լուսնեակին նայում, ախ քաշում ու կրկին գլուխը երկու ձեռքերի մէջ առնում ու մտածողութեան մէջ ընկղմում. կրկին ախ քաշում, կրկին մտածում ու մտածում... Երկար էր նստել, շատ երկար. դեռ ցերեկւանից էր նա

այդտեղ եկել. Մի քանի անգամ ծովի ափին մօտենալուց յետոյ, նա կրկին յետ էր դարձել ու դարձեալ նստել սառը քարերի վրայ: Առաւտեան, երբ նորա տնատէր Մարգարը, իւր խոհարարին և դանապանին հետը առած շուկա էր գնում ամեն մէկին ձեռքը տւած մեծ մեծ զամբիւները, Միքայելը երեակայեց, որ այդ օրը իւր կինը և երեխան, տեսնելով հարեանների պատրաստիլը զատկւա տօնին, պիտի նախանձւին ուրիշների բախտին, ուստի ինքը գաղտնագողի կերպով դուրս եկաւ տնից ու գնաց. ինքն էլ չ'գիտէր թէ ուր: Միմիայն երեկոյեան ժամի 7-ին նա զգաց, որ նստած է ծովի ափին գլանող քարերի վրայ: Նա յիշեց անցեալ տարւայ այդ երեկոյեան իւր ճոխ սեղանը, որի շուրջը նստած իւր ծանօթներն ու բարեկամները ուրախութիւն ուտում խմում էին. նա յիշեց, որ անցեալ տարւայ այդ երեկոյեան իւր կին Անուշը իրան յատուկ գեղձկունու քնքուշութեամբ հիւրասիրում էր հիւրերին զանազան ուտելեղէններով ու ըմպելիքներով. իսկ այժմ, երբ զրկւած գործից, մի քանի ամիսներ թափառելուց յետոյ, դատարկածեոն, նա իւր զատիկը գտնում էր ծովի ալիքների ու հեռու հորիզոնի մէջ:

Դեռ մի քանի օր առաջ նա մտածում էր մի տեղից ճարել մի քանի ուռելի, որ պատրաստէր զատկւա թաթախմանը, որ գոնէ այդ աղիզ օրը մի կուշտ փորով հաց ուտէր: Այդ

մտքով նա շատ դիմումներ արաւ և բոլորից մի-  
ենոյն պատասխանը ստացաւ «չ'կա»: Եւ այդ  
«չ'կա»-ն էր, որ նորան ստիպեց ծովի ափին  
որոնել իւր զատիկը:

\*\*

Կէ՛ս գիշերին մօտ էր, երբ թաղապետ ոս-  
տիկանը շրջում էր իւր թաղում և պատւէրներ  
տալիս քաղաքապահներին զգոյշ լինել և չ'քնել:  
Նա հեռւից նկատեց Միքայէլին, որը լուսնեակի  
աղօտ լոյսի տակ իւր ձեռքերի մէջ առած գլու-  
խը նստած էր քարերի վրա: Մօտեցաւ նրան  
և խրոխտ ձայնով հարց ու փորձի ենթարկեց ու  
ցոյց տալով դէպի փոքրիկ փողոցի անկիւնը,  
պատւիրեց քաղաքապահին ուղեկցել մինչև այն-  
տեղ, ուր մի շարք հարբածներ թափւած էին  
փողոցում մայթերի վրա: Ոստիկանը, օրերով  
քաղցած Միքայէլին, ընդունեց հարբածի տեղ:

Ի՞նչ անէր Միքայէլը: Ազատ ծովի ափին  
էլ տեղ չէին տալիս, որ մենակ նստած իւր հոգ-  
ուը ու ցաւը քաշեր: Գլխիկոր, մտքամոլոր քա-  
ղաքապահի տուաշն ընկած, նա գնում էր, ոչինչ  
չէր մտածում, բայց գլուխը լիքն էր մտքերով:  
Այդպիսով նա շարունակեց իւր ճանապարհը,  
մինչև որ հասաւ կայարանի շինութեան առաջ  
ընկած կանաչազարդ պարտիզին: Գոյնզգոյն,  
ալւան-ալւան ծաղիկների սուր հօտը խոր ներ-  
գործեց Միքայէլի հոտառութեան վրա: Նա  
կանզնեց, մի քանի անգամ խոր յառաջ քաշեց,  
ներս ծեց ծաղիկներից բուրող քաղցր հօտը,

որն աւելի գրգռեց նորա քաղցածութիւնը ու  
թուլացրեց նրան, որի որովայնը մի բան չէր  
մտել ամբողջ օրը, առաւօտեան մի կտոր ու  
հացից զատ: Նա նստեց պարտիզի շրջապատի  
տակ մայթի վրայ, առաւ իւր գլուխը երկու  
ձեռքերի ափերի մէջ ու սկսեց մտածել...

— Ա՛խ, այդ չար ոստիկանը, ինչու թոյլ  
չ'տւեց նստեմ խաղաղ ծովի ափին, ինչով էի  
խանգարում ես նորան: Այն երկու մեծ զամբիւղ-  
ները, որը լցրած զանազան ուտելեղէններով  
տանում էր շուկայից տուն մեր տանտէրը... իսկ  
այն փոքրահաստ տէրտէրը, որ հագել էր ու մա-  
հուղից նոր կարած փարաջան, որի արժէքը հե-  
րիք էր ամբողջ կէս տարւա ապրուստի համար.  
իսկ այն աստիճանաւորը, որը իւր կնոջ հետ  
կուելով յետ էր դառնում շուկայից. երեկի կինը  
չէր խնայում նորա կոպէկները, իսկ ինքը վա-  
ղուց էր զգում, որ զբանում միմիայն մի քա-  
նի ոռւբլի էր մնացել, իսկ մինչև միւս ամսւայ  
քանը, գեռ երկու և կէս տասնեակ օր էլ կայ:  
է՛հ խեղճ գու, երեկի մի օր էլ դու քո զատիկը  
կ'տօնես ինձ պէս փողոցում, երբ քեզ էլ ինձ  
պէս կը հեռացնեն գործից. իսկ այժմ գեռ ծա-  
ռայութեան մէջ ես, արա ինչ որ ուզում է  
կինդ: Ա՛հա այս բոլորը գալիս ու գնում էին  
Միքայէլի աչքի առջե:

Կէս գիշերից անց էր, երբ նորա ուսից բըռ-  
նեց մի ժանդարմ—էյ, գու հարբած էս. ինչու  
ես նստել այստեղ, քնած էս—Միքայէլը քաղ-

ցածութիւնից թուլացած չ'կարողացաւ ոտքի  
վրայ կանգնել. հենւեց ցանքապատին ու սկսեց  
ինքն իրան մըրթմըրթալ: — Դէհ, շուտ հեռացիր.  
Թէ չէ կուղարկեմ ոստիկանատուն: — Միքայելը  
ուղղեց իւր ծուած գլխարկն ու կամաց-կամաց,  
ակամայ քայլելով դիմեց դէպի այն փողոցը, ուր  
մի տան դարպասի մօտ, ներքնայարկի տակ դըտ-  
նող խուցում ապրում էր նա:

Տան դռները փակ էին: Ի՞նչ անէր: Նա չէր  
ուզում դռնապանին յանդիպել և կրկին ու կըր-  
կին լսէր նորա խօսքերը.

— Ազան տան քրէնը ուզում է. կամ տուր  
քրէնը, կամ դուրս եկ կորիր: Ահա այս խօսքերն  
էին, որ ստիպեցին Միքայելին, մինչև առա-  
ւոտեան լոյսը բացւիլը, նստել տան պատի տակ  
և սպասել դռների բացմանը:

Նորա այդ օրւա միակ բախտաւորութիւնը  
նա էր, որ մինչև լոյսի և տան դռների բացւիլը  
ոչ չ'խանգարեց նորա կիսաթեք դրութեան  
մէջ քունը:

Թէև ոսկոները սառել էին առզրիլի գիշեր-  
ւայ խոնաւութիւնից, իսկ բերանի երկու ծնօտի  
ատամիերը չըխկչըխկալով իրար էին զարկում,  
սակայն քաղցից ու անքնութիւնից թուլացած  
նորա մարմինը շուտով ընկաւ կիսամեռ դրու-  
թեան մէջ և Միքայելը սկսեց խըռմփացնել:  
Նա քաշել էր իւր կարճ, պատուտած վերարկի  
փեշերը, ծածկել ծնկների ոսկորները, որոնք  
շուտ են սառչում խոնաւութիւնից, իսկ վերար-

կուի վզնոցը՝ մինչև ականջները, կուչ եկել,  
կըծկւել ծեծւող ոզնու նման պլազզել մէջքը  
դէմ արած սառը պատին: Այդ դրութեան մէջ  
նա սպասում էր լուսաբացին: Նորա երեակայու-  
թեան մէջ պատկերանում էին հարեան տներում  
երեկոյեան պատրաստած ճոխ սեղանները, նրանց  
վրա լիքը-լիքը թանգագին գինիներն ու օղինե-  
րը. իսկ դրունցից յետո իւր աղքատ խուցը, իրա-  
նից մի քանի քայլ հեռաւորութեան վրա, որի  
սեղանի վրա երեք օր էր թիթեղեալ թէյամանը  
դատարկ անշարժ կանգնած, մի կտոր շաքարի  
ու թէյի կարօտ: Նա երեակայում էր թէ ինչ-  
պէս իւր կին Անուշը աչքերը լի արցունքներով,  
քաղցած փորով, դալկացած դէմքով, նստած այդ  
սեղանի շուրջը, ականջը ձգած բակին սպասում  
էր, իրան, Միքայելին:

Առաւօտեան լոյսը բացւեց, երթ և եկը  
սկսեց ամեն տեղ: Քաղաքապահները խումբ-  
խումբ գնում գալիս էին, որոնք զիշերապահութիւ-  
նից դառնում, որոնք օրապահութեան գալիս: Խո-  
հանոցների գոները բացւեցին: Ծառաները սկսեցին  
երեկոյեան սեղանների մնացորդը հաւաքել. ա-  
մանները լւանալ, բոլորը կարգի բերել ու սպա-  
սել տէրերին, որ վեր կենան նորից բացեն ճոխ  
սեղան ու սպասեն եկողների, որ կրկին ու  
կրկին սկսեն ուտել խմելը, քրքիջն ու ծիծաղը,  
օրւա պատշաճաւոր ուրախութիւնը:

Միքայելը մտայոյդ մի պտոյտ արեց. իւր  
սենեակի լուսամուտին հասաւ, չոքեց մայթի

վրա, սրբեց լուսամուտի ապակու վրա փոշին,  
նայեց սենեակի ներսը, բայց մթութեան մէջ  
ոչինչ չ'տեսաւ: Ճրագը վաղուց էր հանգել: Նաւ-  
թի քանակը նրան յայտնի էր, որ չէր հասնիլ  
մինչև առաւօտը: Զոքած տեղից վեր կացաւ,  
մօտեցաւ տան դարձասին, անցաւ փոքրիկ անց-  
քով և մտաւ իւր խուցը: Նորա փոքրիկ երեխան  
երեսի վրա ընկած էր ներքնակի վրա, ձեռքին  
բռնած կարմիր ձուն ու անուշ քնով քնած: իսկ  
կինը երկու ձեռքերը ծալած, ճակատի տակ զը-  
րած խըռուցնում էր:

Սեղանի վրա մի քանի ձւաների կեղեներ  
էին թափւած, մի անկինը կոտրած ափսէի մէջ  
էլ մի կտոր ձուկ կար սպիտակ բարակ լաւաշ  
հացի հետ: Սեղանի վրա ձուկի փշերը ցոյց էին  
տալիս, որ Անուշը իւր բաժինը կերել էր եր-  
կար սովածութիւնից յետոյ, իսկ մնացածը պա-  
հել Միքայելի համար: Սպիտակ լաւաշ հացն ու  
ձուկը նորա ախորժակն այնպէս գրգռեցին, որ  
նա մի քանի անգամ բերանի ջուրը կուլ տւեց:  
Լաւաշ հացի մէջ մի կտոր ձուկ փաթաթեց դեռ  
բաւականին չ'ծամած կուլ տւեց ու նստեց երե-  
խայի քնած թախտի վրա: Քաշեց երեխայի գլու-  
խը իրան, համբուրեց նորա գեղնած երեսը ու  
գուրս եկաւ բակում կանգնեց:

Ամենքը վեր էին կացել, երեկոյեան թափ-  
թը փւած սեղաններից հաւաքում էին մնացորդ-  
ներն ու նոր սեղան սարքում, որ զատիկ շնոր-  
հաւորողներին ընդունեն այդ սեղանի շուրջն ու

շարունակեն կեր ու խումը: Ամեն տեղ անուշ-  
շահուտ օճառներով լւացւում, մազերը զանազան  
իւղերով ու ջրերով օծում ու լւանում, նոր-նոր  
շորեր հագնում ու հագնում երեխաներին, ու-  
րախութեանի սարքում ու կոկում էին: Ծառա-  
ներն անգամ իրանց ուրախ զւարթ էին զգում.  
հագնում էին նոր շորեր, օծում ու լւացւում  
էին, քրքըջոցով այս ու այն կողմը վագում, տէ-  
րերի պատէրները կատարում: Տան շներն ան-  
գամ այդ օրը քաղցածութիւն չէին զգում, որով-  
հետև երեկոյեան սեղանների մնացորդն այնքան  
շատ է եղել, որ նրանք կերել լցւել էին այն-  
պէս, որ այժմ հանգիստ, ուրախ նստել էին իրանց  
տեղն և ուշադրութեան չէին առնում աղբանոցից  
բուրող կերակուրների մնացորդների հոտը:

Այդ բոլորը տեսնում էր Միքայելը և մերթ  
նախանձում կուշտ շների վիճակին, մերթ էլ  
ուրախ ծառաների բախտին: Նա զգաց այդ օրւա  
իրան սպասող ամօթին, թէ ինչպէս կինն ու  
երեխան զարթնելով քնից, պիտի նայեն նրա  
երեխին քաղցած ու տաքացած դէմքով: Նա մը-  
տաւ սենեակ, մօտեցաւ կնոջը, զգուշութեամբ  
հանեց նորա գրպանից սնդուկի բանալին, բա-  
ցեց, հանեց միջից կնոջ պսակի մատանիները,  
կրկին կողպեց և բանալին ձգեց կնոջ գրպանն  
ու զուրս եկաւ փողոց:

Ի՞նչ անէր, ուր գնար: Մի քանի ըոպէ մը-  
տածելուց յետո, ուղղեց իւր քայլերը դէպի փո-  
ղոցի վերևի անկիւնում գտնուղ իսանութպանը,

որը գիշեր ցերէկ ամեն բոպէ շարունակում էր իւր գինու օղու առևտուրը, որի համար զատիկ ու ջրօրհնէք ասած օրերը ծոյլերի հանգստութեան ժամանակ էր համարւում: Նա գիտէր միմիայն մի բան—ամեն բոպէ մի բան պոկել մարդկանցից—այսինքն աշխատել շատ փող հաւաքել:

Միքայելը մտաւ նեղ ու մութ, իրան վաղուց յայտնի անցքով, որը բացւած էր տօն ու կիրակի օրերին հաւատարիմ «մուշտարիների» համար, որի շարունակութիւնը վերջանում էր մի մութ ու խոնաւ սենեակում, ուր վաշխառու խանութպանը դարսել էր բոլոր գրաւ վերցրած իրերը: Այստեղ դուք կը գտնէիք արկղներ, սեղաններ, կաթսաններ, բարձեր, մուշտակներ և բոլոր այն իրերը, որոնք կարելի էր մի քանի անգամ աւել գնով վաճառել, գրաւ վերցրած գնից: Նա անցաւ այդ անցքով, մտաւ խանութ, Խանութպանը նայեց Միքայելի երեսին ու իմացաւ, որ նա գինի կամ օղի առնելու համար չի եկել: Երեսը դարձրեց դէպի պատի տակ աղտոտ սեղանի շուրջը նստոտած անտուն բանւորներին, որոնք վերջի շաբաթւա ոռօճիկներն առած, այդտեղ նստել էին դեռ երեկւա կէսօրից յետո և կաթշկաթ թափում էին խանութպանի ձեռքն իրանց արիւն քրտինքով աշխատած կոպէկներն ու փոխարէնը ստանում կէս ջրախառն գինի ու օղի, թունաւորում իրանց օրգանիզմը:

Մի քանի բոպէ Միքայելը սպասողական գրութեան մէջ կանգնած սպասում էր խանութ-

պանի ուշադրութեան արժանացման: Բայց խանութպանը լաւ գիտէր Միքայէլի գրութիւնն ու նորս այդքան վաղ այցելութեան նպատակը: Նա լաւ գիտէր, որ քանի ուշ սկսի Միքայէլի հետ խօսակցութիւնը, այնքան քիչ կըտա գրաւ դնելու ապրանքի համար: Մի շարք տեղի անտեղի խօսակցութիւնից յետո նա դարձաւ դէպի Միքայէլը:

— Հը ի՞նչ կա մեր տղա, չ'լինի թէ եկել ես գորգը ու կաթսատ տանելու: Երեկի փող ես բերել:

— Ո՛չ, Գրիգոր ապէր, կնոջս պսսկի մատանիներն եմ բերել: Իսէր Աստուծոյ, մի քանի ուռւրով վերցրու մինչև, մի կերպ գործի կը մտնեմ կաշխատեմ և բոլորը կը վճարեմ ու գործի և կաթսայի հետ գրանք էլ յետ կառնեմ:

Գրիգոր ապօր ախորժակը բացւեց մատանիների վրա.

Նա լաւ գիտէր, որ Միքայելը շուտ գործ չի ճարելու և արժէքաւոր իրերը չնչին գումարով կը մնան իրան:

— Հը տեսնեմ,—ասաց վաշխառուն—Միքայելը հանեց գրպանից մատանիներն ու տւաւ նրան: Երկար նայելուց յետո հանեց գրպանից թղթէ երեքանոցը ու դրաւ Միքայելի ձեռքում:

— Դու ես, որ այդքան տալիս եմ, եթէ ուրիշը լինէր, չէի տալ:

Միքայելը լաւ գիտէր, որ ամենափոքրիկ բողոքն անգամ կարող էր զրկել իրան և այդ գումարից: Նա, ձեռքում պինդ բռնած թղթագրամը, շուռ եկաւ ու դուրս գնաց: Մտածում էր, որ մի բան առնէր տուն տանէր, բայց որտեղից նա կարող էր ճարել, քանի որ բոլոր

խանութներն ու շուկաները փակ էին, բացի վաշ-  
խառու գինեվաճառ Գրիգորի գինետնից, որտեղ  
միմիայն գինի և օղի էր վաճառւում:

\* \*

Անուշը ամբողջ գիշերը անհանգիստ անց էր  
կացրել նստած անձրագ մութ խուցում, չոր սե-  
ղանի կողքին։ Առաւօտեան լոյսն ընկել էր խու-  
ցի նեղ լուսամուտով նորա ջրակալած աչքերին։  
Տրորեց աչքերն ու նստեց թախտի վրա քնած  
երեխայի մօտ և սկսեց մտածել անհանգիստ  
կերպով—ուր գնաց, ի՞նչ եղաւ, Տէր Աստւած—  
երեխան ճշչաց ու շուռ եկաւ դէպի մայրը, բա-  
ցեց աչքերը ու—հայրիկ, հայրիկ—կանչելով  
կրկին փակեց և շարունակեց իւր քունը։

Անուշը բացեց գուռը, նայեց բակում կանգ-  
նած դռնապանին, որը տեսնելով Անուշին, ուղղեց  
իւր քայլերը դէպի նա։—Հը աղչի մարդը ուր է։

Անուշը զգաց, որ դռնապանը պիտի մի շարք  
լիտի խօսքեր թափէր իւր ամուսնու հասցէին,  
ծածկեց գուռն և յետ գնաց նստեց փոքրիկ լու-  
սամուտի առաջ և յետեց դռնապանին։ Դռնա-  
պանը յետ քաշեց և հպարտ քայլերով սկսեց  
բարձրանալ վերկի յարկը, նոր պատէրներ ստա-  
նալու տան ախրոջից։

Տան գուռը բացւեց, Անուշը վեր թուաւ  
կարծելով, թէ դռնապանն է յետ դառել։ Մտաւ  
Միքայելը տիտոր ու դալկացած դէմքով առանց  
մի խօսք արտասահելու անցաւ նստեց երեխայի  
մօտ թախտի վրա։ Կի՞նը նկատեց նորա տիրու-  
թիւնը և միացնելով իւր տիրութիւնը ամուս-

նու տիրութեան հետ աշխատում էր խուսափել  
նրա երեսին նայելուց։ Այդպէս մի քանի ըոպէ  
լուս մնացին երկուսն էլ, նայելով երեխայի երե-  
սին, որը կարծես երազի մէջ տեսնում է իւր  
ընկերներին, հագած նոր շորեր, ձեռներին նոր  
խաղալիքներ, ուրախ, զւարթ խաղում են ու-  
իւր մանկական անմեղ նախանձը յարուցանում։

Տան գուռը ծեծւեց։ Անուշը կիսաբաց ա-  
րաւ գուռը, գուրս հանեց իւր գլուխը։ Նորա ա-  
ռաջ կանգնած էր դռնապանը իւր լկտի երեսը  
դարձրած դէպի իւր տէրը, որը կանգնած էր  
պատշգամբում և ի՞նչ որ կարգադրում էր դըռ-  
նապանին խրոխտ ձայնով։—Աղջի, մարդը եկել  
է, ասա աղան փողն ուզում է, թող տան քրէհը  
տա, ասաց դռնապանն ու կոպիտ կերպով այն-  
պէս հրեց տան գուռը, որ Անուշը մի քանի քայլ  
յետ ու յետ գնաց և քիչ էր մնում որ ընկնէր։  
Միքայելը տեսնելով դռնապանի անչափ լկտիւ-  
թիւնը չկարողացաւ զսպել իւր յուզմունքը։  
վեր թուաւ տեղից, գուրս հրեց դռնապանին, և  
գուռը ծածկելով կրկին նստեց տեղն և սկսեց  
յուզել ու կատաղել ի՞նքն իրան։

Ի՞նչ անէր խեղճ Միքայելը, ամբողջ չորս  
ամսւա տան վարձը չէր տւել, ամեն անգամ  
խոստանում էր շուտով ճարել ու տալ, բայց  
չէր կարողանում, և օրէ օր տւելի էր շատա-  
նում իւր պարտքը։

Տան բակում խրոխտ ձայնով մէկը գոռզո-  
ում էր—ի՞նչ է բարեգործական ընկերութիւն

է այստեղ, թէ աղքատանոց—չ'կա թող կորչի  
այստեղից. ուր է. կանչիր դուրս:

Այսխօսքերը Միքայելի ականջին էին համառւմ  
և գնդակների պէս ծակոտում նորա ականջները:

Անուշը պատրաստում էր ինքը պատաս-  
խանել, եթէ ներս գար տան տէր Մարգարը:

Միքայելը չ'սպասեց, որ ներս գար կոպիտ  
գոնապանը, որից սպասում էր շատ յանդուզն  
խօսքեր և լկտի հայհոյանքներ իւր հրելու փո-  
խարէն: Նա վեր կացաւ տեղից և դուրս եկաւ  
բակը մօտեցաւ տան տիրոջ և կամաց-կամաց  
սկսեց խօսել նրա հետ, բայց Մարգարը համբե-  
րութիւնից հանւած, չէր ուզում իրան զսպել:

— Ի՞նչ ես ուզում եղանյր—չունիս թողիր  
դուրս կորիր, ձրի հօ չեմ պահելու քեզ տարի-  
ներով. Անուշը դուռը կիսաբաց էր արել ունա-  
յում էր, թէ ինչով կ'վերջանար այդ խայտա-  
ռակութիւնը: Միքայելը շատ էր աղաչում, որ  
մի երկու շաբաթ էլ սպասի, բայց Մարգարը  
կարգադրեց գոնապանին, որ զոռով դուրս անի  
նրան, եթէ այսօր նա փող չ'ամ:

Միքայելը հանեց գըպանից գրաւ գրած մա-  
տանիների գինը, երեք ոուբլին, գրեց Մարգարի  
ձեռին ու կրկին խնդրեց մի քանի օր սպասել:

Մարգարը շուռ եկաւ ու դուրս գնաց, իսկ  
Միքայելը մտաւ իւր խուցը ու սկսեց մտածել,  
թէ էլի ի՞նչ կարող է նա գրաւ գնել կամ վա-  
ճառել, որ մի քանի օրից յետո այդ անդութի  
ձայնը չ'լսի:

Օրը գատիկ էր. ամեն տեղ կեր ու խում  
և ուրախութիւն . . .



H APM.  
H2-12522

